ՀՏԴ 330
Տնտեսագիտություն

Սեդա ԱՍՐՅԱՆ
E-mail: asryan.seda.18@gmail.com

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔՈՒՄ

*Տնտեսագիտության մեջ առ այսօր տնտեսական քաղաքականության կատեգորիայի վերաբերյալ հստակ սահմանում չկա և տարբեր գիտական տեսություններում տնտեսական քաղաքականությունը բնորոշվում է տարբեր խնդիրներով և նպատակներով: Տնտեսական քաղաքականության տեսական ասպեկտների դիտարկումները չեն կորցնում իրենց արդիականությունը՝ կապված տնտեսական քաղաքականության կարևորվող դերակատարությամբ ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ տնտեսության կայունացման առումով:*

*«Տնտեսական քաղաքականության տեսական ասպեկտները տնտեսագիտական մտքում» հոդվածում ներկայացված են «տնտեսական քաղաքականություն» կատեգորիայի, ինչպես նաև պետության տնտեսական կարգավորման վերաբերյալ տարբեր տնտեսագիտական դպրոցների և առանձին գիտնականների մոտեցումները:*

***Բանալի բառեր՝*** *տնտեսական քաղաքականություն, քաղաքական տնտեսություն, պետության սոցիալ-տնտեսական քաղաքականություն, պետական կարգավորում, տնտեսական կարգերի քաղաքականություն, տնտեսական անվտանգություն, տնտեսական կայունություն:*

***С.Асрян***

## ТЕОРЕТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ В ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

*В экономике до сих пор нет четкого определения категории экономической политики, и в различных научных теориях экономическая политика характеризуется различными проблемами и целями. Теоретические аспекты экономической политики не теряют своей актуальности в связи с все более важной ролью экономической политики, как в плане экономического развития, так и в плане стабилизации экономики.*

*В статье «Теоретические аспекты экономической политики в экономической мысли» представлены подходы различных экономических школ и отдельных ученых к категории «экономическая политика», а также к экономическому регулированию государства.*

***Ключевые слова:*** *экономическая политика, политическая экономия, социально-экономическая политика государства, государственное регулирование, политика экономического порядка, экономическая безопасность, экономическая стабильность.*

**S.Asryan**

## THEORETICAL ASPECTS OF ECONOMIC POLICY IN ECONOMIC THOUGHT

*There is still no clear definition of the category of economic policy, and in various scientific theories, economic policy is characterized by different problems and goals. Theoretical aspects of economic policy do not lose their relevance due to the increasingly important role of economic policy, both in terms of economic development and economic stabilization.*

*The article "Theoretical Aspects of Economic Policy in Economic Thought" presents the approaches of different economic schools and individual scientists on the category of "economic policy", as well as on the economic regulation of the state.*

***Keywords:*** *economic policy, political economy, socio-economic policy of the state, state regulation, economic order policy, economic security, economic stability.*

«Տնտեսական քաղաքականություն» կատեգորիան դեռևս XVIII-ից սկսած մինչ այսօր բազմաթիվ գիտնականների և տեսաբանների ուսումնասիրության շրջանակներում է գտնվում: XXI -րդ դարի համաշխարհային տնտեսական իրավիճակի անկայունությամբ պայմանավորված՝ տնտեսական քաղաքականության հարցերի քննարկումները դարձան առավել արդիական: Այնուամենայնիվ տնտեսագիտության մեջ առ այսօր այդ հասկացության վերաբերյալ հստակ սահմանում չկա և տարբեր գիտական տեսություններում տնտեսական քաղաքականությունը բնորոշվում է տարբեր խնդիրներով և նպատակներով: «Տնտեսական քաղաքականություն» կատեգորայի վերաբերյալ ընդհանրական պատկեր ունենալու համար անդրադառնանք տնտեսական քաղաքականության տեսական բնութագրումներին:

Գիտական գրականության մեջ «քաղաքական տնտեսություն» և «տնտեսական քաղաքականություն» հասկացությունների բաժանման անհրաժեշտությունը առաջացել Է XVIII-ի վերջում և XIX դարի սկզբում: Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ի. Մ. Գոլդշտեյնի կարծիքով նման փորձեր ձեռնարկվել են գերմանացի կամերալիստների կողմից XVIII-րդ դարում՝ ի տարբերություն ֆիզիոկրատների և քաղաքատնտեսության դասականների, որոնց աշխատություններում այդ ոլորտներին առնչվող խնդիրները դժվար էր տարանջատել:[1] Ի.Մ.Գոլդշտեյնը իր «Տնտեսական քաղաքականություն» գրքում նշում է, որ առաջին անգամ «քաղաքական տնտեսության» և «տնտեսական քաղաքականության» հասկացությունների հստակ տարանջատումը առաջարկվել է գերմանացի քաղաքական գործիչ, հայտնի իրավաբան, տնտեսագետ գիտնական, Բավարիայի թագավորական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Կոմս Յ.ֆոն Զոդենի կողմից (1754-1831): Սակայն հարկ է նշել, որ մինչ այդ «տնտեսական քաղաքականություն» տերմինը օգտագործվել է Անտուան դե Մոնկրետիեն դե Վատտեվիլի կողմից “Traité d’économie politique” աշխատության մեջ[2]:

---

[1] ***Гольдштейн И.М***. *Статья “Экономическая политика” Энциклопедический словарь Ф.А.Брокгауза и И.А.Ефрона, СПБ.:Брокгауз Ефрон 1890-1907, с.352*

[2] *“Traité d’économie politique” Antoine De Montchrétien avec Introduction Et Notes Par Th. Funck-Brentano, 1615*

Տնտեսական գրականության մեջ որպես տնտեսական քաղաքականության տեսության հիմնադիր ընդունված է համարել Յ.ֆոն Զոդենին, ով, ըստ էության, առաջինը բացահայտեց տնտեսական քաղաքականության բուն էությունը: Իր աշխատության մեջ Զոդենը գրել է. «Ես այս գիտությունն անվանում եմ քաղաքական տնտեսություն, մի կողմից՝ «պետություն» և «ազգ» հասկացություններում խառնաշփոթից խուսափելու համար, մյուս կողմից՝ ընդգծելու այս գիտության ինքնուրույնությունն ու անկախությունը, այսինքն՝ կանխելու «տնտեսական քաղաքականություն» հայեցակարգի հետ հետագա միաձուլումը»[1]: Զոդենը պնդում է, որ քաղաքական տնտեսությունը պետք է ուղղված լինի վերահսկելու պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության որոշ մեթոդների, այդ թվում նաև հարկադիր և պետական իշխանությանն առնչվող, կիրառման օրինականությունը:[2] «Տնտեսական քաղաքականություն» գիտությունը զբաղվում է բացառապես հասարակության համընդհանուր կարողության ընդլայնմամբ, պետության բարեկեցությամբ, բարգավաճմամբ և կուտակված ռեսուրսների պահպանմամբ: Հետևաբար տնտեսական քաղաքականությունը պետք է մշակի այն սկզբունքները, որոնք կնպաստեն ինչպես պետության սեփական ռեսուրսների գեներացման գործին, այնպես էլ հասարակության մաս կազմող առանձին անհատների բարեկեցության ձգտմանը: Սակայն կարևոր է չմոռանալ այն սկզբունքների մասին, որոնց պետք է հավատարիմ մնալ հատկապես երբ հարցը վերաբերում է այն խնդրին, թե ինչպես է հնարավոր այդ առանձին անհատի սեփական բարեկեցության ձգտումը համատեղել հասարակության համընդհանուր բարեկեցության բարելավման հետ և այս առումով ինչ սահմաններում է պետք պահպանել առանձին անհատի ձգտումը այնպես, որ հնարավոր լինի այս երկու մոտեցումների համատեղումը այն գիտության տեսանկյունից, որը ես անվանում եմ քաղաքական տնտեսություն»:[3] Այսինքն՝ կարող ենք ենթադրել, որ Զոդենը տնտեսական քաղաքականություն է համարում պետական իշխանության դրսևորման այն ձևը, որը պետության յուրատեսակ «իրավունքի սկզբունքի» շրջանակներում գործնականում օգտագործվում է պետության նկատմամբ քաղաքատնտեսության սկզբունքներում:

Պետական տնտեսական քաղաքականության տեսությունը՝ որպես բարդ, բազմակողմանի և ինքնուրույն սոցիալ-տնտեսական երևույթ, իր ամբողջական ձևով սկսեց օգտագործվել կապիտալի նախնական կուտակման ժամանակ: Տնտեսական քաղաքականության առանձին դրույթներ մի փոքր ավելի վաղ են գործածության մեջ դրվել:

Պետական իշխանության ամրապնդումն ու շուկայական մեխանիզմների զարգացումն այն է, ինչին մերկանտիլիստներն առաջարկում էին ուղղել պետության տնտեսական քաղաքականությունը: Հետագայում պետության տնտեսական քաղաքականության ուսումնասիրությամբ դարեր շարունակ զբաղվել են բազմաթիվ գիտնականներ: Ինչպես հայտնի է, Ա. Սմիթը շեշտը դնում էր տնտեսական քաղաքականության սահմանափակումների վրա և հիմնավորում էր շուկայական տնտեսության գործունեությանը պետության չմիջամտելու դիրքորոշումը: Մարքսիզմը բացահայտեց պատմական զարգացման գործընթացում տնտեսական և քաղաքական գործոնների

---

[1] **Soden J.***Die Nationalökonomie, Wien, 1815. P10*

[2] *Same P 20-21.*

[3] **Soden J.***Die Nationalökonomie, Wien, 1815. P11-12*

օբյեկտիվ փոխհարաբերությունները և հաստատեց հենց տնտեսական գործոնների որոշիչ դերը՝ միևնույն ժամանակ ընգծելով քաղաքական գործոնների ազդեցությունը տնտեսական գործոնների վրա, ինչն էլ հենց բնորոշում է պետության տնտեսական միջամտության յուրահատուկ դերը:

Տնտեսական քաղաքականության ուսումնասիրության հիման վրա նեոդասական մոտեցման գաղափարակիցները մշակեցին պետության հատուկ հակամենաշնորհային քաղաքականության տեսական հիմքերը, սահմանեցին սոցիալ-տնտեսական քաղաքականությունն ու պետության ամենակարևոր խնդիրներից մեկը՝ սոցիալական նշանակության հիմնախնդիրների բացահայտումը և, բնակչությանը հանրային ապրանքներ տրամադրելով, նպաստել դրանց մասնակի լուծմանը:

Դասական դպրոցի ներկայացուցիչները նաև սահմանեցին պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության այնպիսի ձևեր, ինչպիսիք են խելամիտ հարկային քաղաքականությունը, գյուղատնտեսական, հարկաբյուջետային և հարկային քաղաքականությունը և այլն՝ որպես շուկայական տնտեսության ամենաարդյունավետ գործիքներ:

Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության բազմամակարդակ համակարգն այն համախառն գործիքն է, որի օգնությամբ պետական սուբյեկտներն ու ինստիտուտները տնտեսական հարաբերությունների մյուս մասնակիցներին ուղղորդում են կոնկրետ նպատակների հասնելու համար, որոնք անհրաժեշտ են տվյալ փուլում հասարակությունների զարգացման գործընթացում:

Ցանկացած պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը պետք է լինի համակարգային, այսինքն՝ արտացոլի արտադրական հարաբերությունների ամբողջությունը նյութատեխնիկական բազայի և սոցիալ-դասային հարաբերությունների, ինստիտուտների և այլնի հետ փոխկապակցվածության պայմաններում[1]:

Մ.Սանտալովայի կարծիքով՝ պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը ուղղակիորեն կապված է սոցիալական զարգացման համար սահմանված հիմնական նպատակների և սահմանափակ կոնկրետ գործառույթների հետ, որոնց իրագործումը ստանձնում է պետությունը. այն սահմանում է բոլորի համար ընդհանուր «տնտեսական խաղի» կանոնները, և հենց այդ կանոններն են, որոնք հիմնականում որոշում են տնտեսական զարգացումը և սոցիալական խնդիրների լուծումը[2]:

Այսինքն՝ պետությունը նախ պետք է տնտեսության բոլոր օղակներում հստակ սահմանի կայուն և փոխհամաձայնեցված, իրավաբանորեն ամրագրված և բոլորի համար պարտադիր «խաղի կանոններ», և երկրորդ՝ ոչ պակաս հստակ և որոշակի հեռանկարով որոշի, թե ի՛նչ կարգավորում, ինչպե՛ս և ի՛նչ չափով է այն (կամ չի) իրականացնելու վերը նշված ոլորտներից յուրաքանչյուրում:

Այն հարցին, թե ի՛նչ մեխանիզմներով է իրականացվում պետության տնտեսական կարգավորումը 20-րդ դարի գերմանացի տնտեսագետ Վալտեր Օյկենը նշում է, որ գոյություն ունեն տնտեսական կարգավորման երկու հիմնական մոտեցումներ, որոնք բնութագրվում են տնտեսական իշխանության իրականացման պայմանների հակասությամբ: Մի դեպքում՝

---

[1] *Политческая экономия и экономическая политика. Рынок. Капитал. Общество.* ***Бузгалин А.В., Колганов А.И.****, Москва 2016г. Стр.30*

[2] *Социально-Экономическая Политика Государства: Методология И Теория. Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук.* ***Санталова М.С.****, Москва 2006, Стр.13*

առանձնացվում է կենտրոնացված պետական կարգավորումը, որը ենթադրում է կենտրոնական իշխանական օղակի գերագույն իշխանություն և առանձին անհատների մաքսիմալ զրկում քաղաքացիական իրավունքներից: Մյուս դեպքում՝ ենթադրվում է կենտրոնական կարգավորմանը լրիվ հակադիր իրավիճակ, այն է՝ կատարյալ մրցակցություն, որի պայմաններում բացառվում է այլ անձի տնտեսական գործունեությանը մեկ այլ անձի կողմից ներգործելու հավանականությունը:[1]

Դեռևս 1939թ. Վ.Օյկենը ապացուցեց, որ կենտրոնացված կառավարվող տնտեսության տնտեսական քաղաքականությունը համակարգային տեսանկյունից չի կարող իրականացնել տնտեսության ռացիոնալ կարգավորում, քանզի այն չի կարող փոխկապակցել միլիոնավոր մարդկանց պահանջարկն ու առաջարկը մեկ համընդհանուր օղակի մեջ՝ հաշվի առնելով նաև ռեսուրսների սահմանափակության խնդիրը:[2] Օյկենի ընդհանուր եզրակացությունն այն է, որ նպատակահարմար է պետական կարգավորման ոլորտի նեղացումը: Նրան համակարծիք էր հետպատերազմյան «գերմանական հրաշքի» ստեղծող Լ.Էրհարդը, ով կյանքի կոչեց իր ուսուցչի մտքերը: Կարգավորումը, ի տարբերություն մրցակցության, պետք է լինի չափավորված:

Վ. Օյկենի գաղափարների համախոհ և հետնորդ Ա. Մյուլլեր-Արմակը կարծում էր, որ բարձրագույն արտադրողականության համար մրցակցային պայքարի արդյունքում ստացված արդյունքները պետք է ճշգրտվեն սոցիալ-քաղաքական լծակների միջոցով, որպեսզի «շուկայում ազատության սկզբունքը համադրվի սոցիալական փոխհատուցման սկզբունքի հետ»:

Ըստ Քեյնսյան տեսության՝ տնտեսական քաղաքականությունը ընդհանուրի կամք արտահայտող պետական կարգավորում է, որը ազդում է այնպիսի անկախ փոփոխականների վրա, ինչպիսիք են՝ սպառման հակումը, կապիտալի սահմանափակ արդյունավետությունը և տոկոսի նորմը, նրանց միջոցով նաև միջին-զբաղվածության և ազգային եկամտի վրա:

Քեյնսը նախապատվությունը տալիս է դրամավարկային և հարկային քաղաքականությանը, իսկ պետականացմանը թերահավատորեն է վերաբերվում: Տնտեսության մեջ պետության միջամտության անխուսափելիության ճանաչումը հիմք հանդիսացավ ԱՄՆ նախագահ Ֆ.Դ.Ռուզվելտի «Նոր ուղղության» հռչակման համար, որը նպատակ ուներ կառավարության միջոցներով լուծելու մի շարք խնդիրներ՝ կայուն վերարտադրությունն ապահովելու համար: 1940-1960-ական թվականներին Ջ.Մ. Քեյնսի գաղափարները լայն տարածում գտան արևմտաեվրոպական երկրների պետական կառավարման ոլորտներում:

Ժամանակակից տնտեսական քաղաքականության էությունը հասկանալու համար բավական հետաքրքիր են XX-րդ դարի հոլանդացի տնտեսագետ Յան Թինբերգենի աշխատանքները:

Թինբերգենը տնտեսական քաղաքականության տակ հասկանում է «տնտեսական վարքագծի որոշակի գործողություններ: Ամենաճիշտ և ակնհայտ իմաստով տնտեսական քաղաքականության հասկացությունը պետք է վերաբերի կառավարությանը»[3]: Տնտեսական քաղաքականության նկատմամբ Թինբերգենի վերաբերմունքի ըմբռնման մեջ կարևոր է թվում

---

[1] *“Основные принципы экономической политики”* ***Вальтер Ойкен****: Пер. с нем. Общ. Ред. Л.И.Цедилина и К.Херрманн-Пилалата, вступ. Сл. О.Р.Лациса.- М.: “Прогресс” “Универс”, 1995.-496 с. 27*

[2] *Там же , с. 30*

[3] ***Tnibergen J****. Economic Policy: Principles and design-Amsterdam, 1956.-P.3*

նրա հրապարակային բանավեճը Ջ.Մ.Քեյնսի հետ (Թինբերգենը կոչ է արել, այսպես կոչված, հիմք ընդունել մոդելային մտածողությունը և գործի դնել տնտեսամաթեմատիկական մոդելները, իսկ Քեյնսը պնդում է, որ ամենակարևորը մոդելների ճիշտ ընտրությունն է): Սակայն երկուսն էլ տնտեսական քաղաքականությունը դիտարկում են կոնկրետ տնտեսական խնդիրների լուծման համար պետության միջամտության տեսանկյունից:

Հենց Թինբերգենի աշխատանքներն են բացում տնտեսական քաղաքականության ոլորտում հետազոտությունների ժամանակակից փուլը՝ վերաիմաստավորելով տնտեսական քաղաքականության մոտեցումները:

Ընդ որում, իր հետազոտություններում Թինբերգենը չի հակադրում տնտեսական տեսությունն ու տնտեսական քաղաքականությունը՝ դրանք դիտարկելով որպես մեկ ամբողջություն, ինչը հատկապես նկատելի է տնտեսական քաղաքականության նպատակների վերլուծության ժամանակ: Նա կարծում է, որ տնտեսական քաղաքականության նպատակը առավելագույն սոցիալական բարեկեցության հասնելն է:

Ինչ վերաբերում է տնտեսական քաղաքականության նպատակներին, ապա առավել հաճախ առանձնացվում են հետևյալ խնդիրները. տնտեսական գործընթացների և տնտեսական զարգացման վրա տնտեսական քաղաքականության ազդեցությունը, տնտեսական կարգերի քաղաքականությունը (Պ. Վելֆենս), տնտեսության արդյունավետության բարձրացումը (Գ. Ե. Ալպատով), ինստիտուտների ձևավորումը (Մ.Ս. Սանտալովա): Այնուամենայնիվ, բոլոր նպատակների բազմազանությամբ, Ժամանակակից հետազոտողները (Յ.Թինբերգենը, Վ.Օյկենը, Վ.Ա.Պեշեխոնովը) հակված են այն մտքին, որ տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի կյանքի բարձր որակը և հասարակության բարեկեցության բարձրացումը:

Թինբերգենի տեսությունը լուրջ քննադատության ենթարկվեց ամերիկյան տնտեսագետ Ռ.Լուկասի կողմից: Վերջինս կասկածի տակ դրեց այն գաղափարը, որ ինչպես քանակապես, այնպես էլ որակապես բնութագրող մեծ մակրոտնտեսական մոդելներ օգտագործելը արդյունավետ է տնտեսական քաղաքականության մշակման տեսանկյունից:

Լուկասը ապացուցեց, որ խոշոր մոդելները հուսալի չեն, հատկապես, երբ կառավարության քաղաքականությունը կարող է կտրուկ փոփոխվել: Կա մեծ հավանականություն, որ քաղաքականության ազդեցությունը բնութագրող մոդելների գործակիցները կդառնան ոչ հուսալի: Գիտնականը ցույց տվեց, որ մեծ մոդելում հնարավոր չէ պատշաճ կերպով ներառել սպասումները և հետևաբար քիչ հավանական է, որ դրանք արդյունավետ լինեն քաղաքականության փոփոխության ազդեցությունը կանխատեսելու մեջ:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցած վերջին իրադարձությունները շատ տեսաբանների ստիպում են հերթական անգամ վերանայելու տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ պետության դերը, երբ երկրները կանգնում են տնտեսական անվտանգության լուրջ խնդրների առջև:

Ակադեմիկոս Լ.Ի.Աբալկինը տնտեսական անվտանգությունը սահմանում է որպես «տնտեսական համակարգի մի վիճակ, որը թույլ է տալիս նրան դինամիկ, արդյունավետ զարգանալ և լուծել սոցիալական խնդիրները, և որի դեպքում պետությունն ունի անկախ տնտեսական քաղաքականություն

մշակելու և կյանքի կոչելու հնարավորություն»:[1] Եվ այսպես հարց է առաջանում, թե ժամանակակից տնտեսական և քաղաքական ճգնաժամերի պայմաններում պետական տնտեսական քաղաքականության գոյություն ունեցող մեթոդները և գործիքները կարո՞ղ են ճկուն և ժամանակին արձագանքել համաշխարհային տնտեսական զարգացումներին: Կարծում ենք, որ ժամանակակից պայմաններում պետության տնտեսական քաղաքականության ուղղվածությունը պետք է բխի պետության տնտեսական անվտանգության և կայունության չափանիշներից՝ դիտարկելով տնտեսական զարգացման խնդիրները և քաղաքականության գործիքների կիրառելիությունը տնտեսական անվտանգության տեսանկյունից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абалкин Л.А. “Экономическая безопасность России: угрозы и их отражение”. Вопросы экономики. -1994. -№12. -с. 10-29
2. Бузгалин А.В., Колганов А.И., “Политческая экономия и экономическая политика. Рынок. Капитал. Общество”. Москва 2016г.;
3. Гольдштейн И.М., Статья “Экономическая политика” Энциклопедический словарь Ф.А.Брокгауза и И.А.Ефрона, СПБ.:Брокгауз Ефон 1890-1907;
4. Санталова М.С., “Социально-Экономическая Политика Государства: Методология И Теория”. Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук., Москва 2006;
5. “Основные принципы экономической политики” Вальтер Ойкен: Пер. с нем. Общ. Ред. Цедилина Л.И. и К.Херрманн-Пилалата, вступ. Сл. О.Р.Лациса.- М.: “Прогресс” “Универс”, 1995.;
6. “Traité d’économie politique” Antoine De Montchrétien avec Introduction Et Notes Par Th. Funck-Brentano, 1615;
7. Soden J.Die Nationalökonomie, Wien, 1815;
8. Tnibergen J.Economic Policy: Principles and design-Amsterdam, 1956

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ. Թ.Ն.Մանասերյանը:

[1] ***Абалкин Л.А.*** *Экономическая безопасность России: угрозы и их отражение. Вопросы экономики.-1994.-№12.-с. 10-29*